

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի, Մկրտիչ Մինասյանի և Արևիկ Դետրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով ներկայացված՝ գործող 6-րդ հոդվածի սուր խմբագրության՝

ա. 3-րդ մասով սահմանվող իրավունքները վերապահվել են բացառապես ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում բուժվող հիվանդներին, այնինչ այդ իրավունքները պետք է սահմանվեն հոգեբուժական կազմակերպություններում բուժվող բոլոր հիվանդների համար,

բ. 8-րդ մասով իրավունքների մի այլ խումբ վերապահվել է բացառապես առանց իր կամ իր օրինական ներկայացուցչի հոսպիտալացվող անձանց, մինչդեռ դրանց գերակշռող մասը պետք է վերապահվի հոգեբուժական կազմակերպությունում գտնվող՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց (օրինակ, ոչ հոժարական հոսպիտալացվող անձն ունի անձը չնվաստացնող վերաբերմունք ստանալու իրավունք, իսկ ընդհանուր հսկողության բաժանմունքում գտնվող անձը՝ ոչ):

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք հողվածն ամբողջովին վերախմբագրել՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքները սահմանելով առանց տարանջատման, իսկ այն իրավունքները, որոնք կարող են ծագել հատուկ հանգամանքներում, սահմանել առանձին դրույթով.

2) 2-րդ հողվածով փոփոխվող 21-րդ հողվածը «հիման վրա» բառերից հետո լրացնել «կամ» բառով, քանի որ նորմն առաջարկվող խմբագրությամբ սահմանելու դեպքում ընդհանուր հսկողության բաժանմունքում հոժարական գտնվող հիվանդը կարող է դուրս գրվել բացառապես իր պահանջով: Այնինչ, հնարավոր են դեպքեր, երբ հիվանդը հետագա բուժման անհրաժեշտություն չունենա, սակայն չպահանջի իրեն դուրս գրել: Նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է նախագծի 2-րդ հողվածով սահմանել հիվանդի՝ բժշկի եզրակացության հիման վրա դուրսգրման հնարավորություն.

3) վերնագրից անհրաժեշտ է հանել «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծում լրացումներ չեն կատարվում:

2. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարալու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություն» բառով, քանի որ նախագծում կատարվում է միայն փոփոխություն.

2) 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման թիվը, մասնավորապես, «ՀՕ-59-Ն» թիվն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-59» թվով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ղուկասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

1. Նախագծի կարգավորման արդյունքները:

Առաջարկվող նախագծերի ընդունման դեպքում կարգավորման արդյունքները կլինեն հետևյալը

**«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի մասով**

1) կամրագրվի հոգեկան խանգարումներով տառապող անձանց՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և ազատությունները ունենալու վերաբերյալ դրույթը՝ միաժամանակ տարանջատելով և տարբերակելով ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում գտնվող և ոչ հոժարակամ հոսպիտալացված անձանց իրավունքները: Արդյունքում, Նախագծի հոդված 1-ով փոփոխվող հոդված 6-ի 3-րդ մասով սահմանվող իրավունքները կվերապահվեն բացառապես ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում բուժվող հիվանդներին, այնինչ այդ իրավունքները պետք է սահմանվեն հոգեբուժական կազմակերպություններում բուժվող բոլոր հիվանդների համար, միաժամանակ նույն հոդվածի 8-րդ մասով իրավունքների մի այլ խումբ կվերապահվի բացառապես առանց իր կամ իր օրինական ներկայացուցչի հոսպիտալացվող անձանց, մինչդեռ դրանց գերակշռող մեծամասնությունը պետք է վերապահվի հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց (փաստորեն ստացվում է, որ օրինակ՝ ոչ հոժարակամ հոսպիտալացվող անձը ունի անձը չնվաստացնող վերաբերմունք ստանալու իրավունք, իսկ ընդհանուր հսկողության բաժանմունքում գտնվող անձը՝ ոչ):

2) կամրագրվեն ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում բուժվող, ինչպես նաև ոչ հոժարակամ հոսպիտալացված երեխաների իրավունքները, ինչը գործող օրենքում ամրագրված չէ:

3) կսահմանվի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում կամավոր գտնվող հիվանդի դուրսգրման փոփոխված ընթացակարգ՝ որպես հիմք կիրառելով բացառապես հիվանդի պահանջի առկայությունը:

4) կսահմանվեն հոգեկան խանգարումով տառապող անձանց ոչ հոժարակամ (հարկադիր) հոսպիտալացման համար անհրաժեշտ պայմաններ, ինչը գործող օրենքում ամրագրված չէ:

5) օրենքի կառուցվածքը խմբագրական բնույթի փոփոխություններ կկրի:

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով

1) կամրագրվի երեխայի՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության դատարանի վճռի հիման վրա հոսպիտալացնելու հնարավորությունը,

2) կամրագրվի երեխայի հոգեբուժական հաստատությունում հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության եւ մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների եւ այլ անձանց հետ տեսակցության եւ նամակագրության իրավունքը:

2. Նախագծերը չընդունելու դեպքում առողջապահության բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները.

1) բուժհաստատություններում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրացում՝ առանց բուժվողի գտնվելու բաժանմունքը որպես իրավունքի ծագման հիմք սահմանելու,

2) չեն ամրագրվի հոգեբուժական բաժանմունքում բուժվող, ինչպես նաև ոչ հոժարակամ հոսպիտալացված երեխաների իրավունքները ,

3) ընդհանուր հսկողության բաժանմունքում գտնվող անձինք կդուրսգրվեն ինչպես հոգեբույժի եզրակացության հիման վրա, այնպես էլ հիվանդի պահանջով,

4) ոչ հոժարակամ հոսպիտալացման հարցը որոշող հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համար չեն ամրագրվի նախապայմաններ,

3. Հոգեբուժական օգնության բնագավառում վարվող քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական տվյալները.

Հոգեբուժական օգնության ոլորտում առանձին ռազմավարական ծրագրեր չեն ընդունվել, իրականացվում է ընթացիկ գործունեություն, այդուհանդերձ վարվող ընթացիկ քաղաքականությունն ուղղված է հոգեբուժական համակարգը փակ համակարգից առավել թափանցիկ դարձնելուն, հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրացումն առավել արդյունավետ ապահովելու նպատակով օրենսդրական հիմքեր և ընթացակարգեր սահմանելով բուժանձնակազմի գործունեության վերահսկելությունն ու հաշվետվողականությունն բարձրացնելուն: Կարգավորվող հարաբերությունների վերաբերյալ համեմատական վիճակագրական տվյալներ առկա չեն:

4. Նախագծի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը

Օրենքն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

5. Նախագծի կարգավորման վերաբերյալ առաջարկվող տարբերակ (առաջարկություններ)

Ելնելով վերոգրյալից և առողջապահական համակարգի համար առավել բարենպաստ կարգավորման տարբերակ ընդունելու նպատակով.

**«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի մասով**

1) 6-րդ հոդվածը ամբողջովին վերախմբագրել հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքները սահմանելով առանց տարանջատման, իսկ այն իրավունքները, որոնք կարող են ծագել հատուկ հանգամանքներում՝ սահմանել առանձին դրույթով,

2) Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող հոդված 21-ում «հիման վրա» բառերից հետո սահմանել «կամ հոգեբույժի եզրակացության հիման վրա հիվանդի պահանջով» բառերը, քանի որ առաջարկվող խմբագրությամբ նորմը սահմանելու դեպքում ընդհանուր հսկողության բաժանմունքում հոժարակամ կարգով գտնվող հիվանդը կարող է դուրս գրվել բացառապես իր պահանջով: Այնինչ, հնարավոր են դեպքեր, երբ հիվանդը հետագա բուժման անհրաժեշտություն չունենա, սակայն չպահանջի իրեն դուրս գրել: Նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածով սահմանել հիվանդի՝ բժշկի եզրակացության հիման վրա դուրսգրման հնարավորությունը:

3) Օրենքի նախագծի վերնագրից հանել «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծում լրացումներ չեն կատարվում:

**«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մասով**

1. Նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություն» բառով, քանի որ նախագծում կատարվում է միայն փոփոխություն:

2. Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման թիվը, մասնավորապես՝ «ՀՕ-59-Ն» թիվն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-59» թվով:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն քննազատում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

ՀՈԳՎԱԾ 1 «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԳՎԱԾ 6. ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

1. Հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը երաշխավորվում է օրենքի, մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:

2. Հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և ազատությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, մասնավորապես իրավունք ունեն՝

1) հաստատելու նամակագրական կապ.

2) օգտվելու հեռախոսակապից.

3) հանդիպելու այցելուների հետ.

4) ունենալու և ձեռք բերելու առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվելու անձնական հագուստից.

5) հաղորդակցվելու թերթերի և լրագրերի միջոցով.

6) անմիջականորեն դիմելու բուժհաստատության ղեկավարին կամ բաժանմունքի վարիչին՝ բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով.

7) տալու համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու բուժական մեթոդներից և միջոցներից, եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով.

8) պահանջելու իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին:

4. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում բուժվող հոգեկան խանգարում ունեցող անձինք իրազեկվում են իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին՝ դրանց վերաբերյալ նշում կատարելով բժշկական

փաստաթղթերում: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրազեկման թերթիկի ձևը հաստատում է առողջապահության ոլորտում լիազոր պետական մարմինը:

5. Հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային պայմաններում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրենց իրավունքներն իրականացնում են անձամբ կամ օրինական ներկայացուցչի միջոցով:

6. Հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրավունք ունեն քննվելու եւ վերաքննվելու բժշկատեղիական փորձաքննական հանձնաժողովների կողմից:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-7-րդ կետերում նշված իրավունքները կարող են սահմանափակել բուժող բժիշկը, բաժանմունքի վարիչը կամ տնօրենը, եթե դրանց իրականացումը վտանգ է ներկայացնում հիվանդի կամ շրջապատի համար:

8. Հոգեբուժական կազմակերպություն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության հոսպիտալացվող անձն իրավունք ունի՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների եւ պարտականությունների վերաբերյալ.

2) օգտվելու առողջության պահպանման իրավունքից, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաեւ գնության ենթարկվելու իր նախընտրած բժշկի կողմից սեփական միջոցների հաշվին.

3) օգտվելու իր նկատմամբ բարեկիրթ, անձը չնվաստացնող վերաբերմունքից.

4) իր իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, անձամբ կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու հոգեբուժական կազմակերպության ղեկավարին, նրա վերադաս մարմին, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին եւ կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.

5) օգտվելու սոցիալական ապահովության իրավունքից.

6) ստանալու իրավաբանական օգնություն.

7) օգտվելու անձնական անվտանգության ապահովման իրավունքից.

8) հաղորդակցվելու արտաքին աշխարհի հետ թերթերի եւ ամսագրերի միջոցով՝ հաստատելով նամակագրական կապ, հանդիպելով այցելուների հետ.

9) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության եւ ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում.

10) կոչվելու իր անվամբ կամ ազգանվամբ.

11) անձնական ընդունելության խնդրանքով դիմելու հոգերուժական կազմակերպության ղեկավարին, դրա գործունեության նկատմամբ հսկողություն ելվերահսկողություն իրականացնող մարմիններին.

12) կնքելու քաղաքացիաիրավական գործարքներ, բացառությամբ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի 8-րդ, 9-րդ (բացառությամբ հանգստի եւ ութժամյա գիշերային քնի իրավունքի) եւ 12-րդ կետերով սահմանվող իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով կամ հետազոտող բժշկի կամ հոգերուժական հանձնաժողովի կողմից, եթե դրանց իրականացումը վտանգ է ներկայացնում հիվանդի կամ հասարակության համար կամ, խոչընդոտում է բժշկական հետազոտությանը կամ փորձաքննությանը: Հոգերուժական հանձնաժողովի կամ հետազոտող բժշկի կայացրած որոշումները պետք է լինեն պատճառաբանված եւ պարտադիր ամրագրվեն բժշկական փաստաթղթերում: Նշված հիմքերով իրավունքների սահմանափակման մասին նույն օրը իրագեկվում է հոգեկան հիվանդությանը տառապող անձին եւ համապատասխան գրառում է կատարվում բժշկական փաստաթղթերում: Նշված հիմքերի վերացման դեպքում հոգերուժական կազմակերպությունը պարտավոր է նույն օրը սահմանափակումների վերացման մասին տեղեկացնել հիվանդին՝ համապատասխան նշում կատարելով բժշկական փաստաթղթերում:

10. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասով սահմանված հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրականացման ընթացակարգերը (այսուհետ՝ իրավունքների իրականացման ընթացակարգ) սահմանվում են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով:

11. Ընդհանուր հսկողության հոգերուժական բաժանմունքում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող, ինչպես նաեւ հոգերուժական կազմակերպություն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության հոսպիտալացվող երեխաները համապատասխանաբար ունեն սույն հոդվածի 3-րդ մասի 1-8-րդ կետերով, 8-րդ մասի 1-12-րդ կետերով, ինչպես նաեւ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավունքները:

12. Բուժման, հետազոտման, դուրսգրման հարցերով բժշկական հաստատության ղեկավարին կամ բաժանմունքի վարիչին դիմելու, ինչպես նաեւ սույն հոդվածի 3-րդ մասի 7-8-րդ կետերով նախատեսված իրավունքներն իրականացնում են հոգեկան խանգարումներ ունեցող երեխայի օրինական ներկայացուցիչը:

13. Ոչ հոժարակամ /հարկադիր/ հոսպիտալացման կամ հոգերուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հոգերույժի որոշմամբ հոգեկան խանգարմամբ տառապող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման (գոտիներ, հատուկ հագուստներ) ու մեկուսացման միջոցներ, հանդարտացման բժշկական մեթոդներ, որոնց կիրառման ու տեղողության մասին բժշկական փաստաթղթերում կատարվում է պատճառաբանված գրառում»:

ՀՈԴՎԱԾ 2.

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. ընդհանուր հսկողության հոգերուժական բաժանմունքում հոժարակամ (կամավոր) կարգով գտնվող հիվանդի դուրս գրումը կատարվում է հոգերույժի եզրակացության հիման վրա հիվանդի պահանջով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերի: Նշված դեպքերում հոգերուժական կազմակերպության տնօրենը սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով դիմում է դատարան: Դուրսգրումից առաջ հոգերուժական կազմակերպության տնօրենը գրավոր ծանուցում է հիվանդի օրինական ներկայացուցչին՝ ծանուցագրում նշելով դուրսգրման օրը եւ ժամը»:

ՀՈԴՎԱԾ 3.

Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«ՀՈԴՎԱԾ 22. ՈՉ ՀՈԺԱՐԱԿԱՄ /ՀԱՐԿԱԴԻՐ/ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե

1) նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ

2) բուժում չիրականացնելը, կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հոգեբուժական այն կազմակերպության տնօրինությունը, որին բուժման համար դիմել, կամ որում բուժվում է հոգեկան խանգարումներով տառապող անձը, բուժումից հրաժարվելու, կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելու պահից 72 ժամվա ընթացքում դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ գլխով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ /հարկադիր/ բուժման ենթարկելու համար:

ՀՈԴՎԱԾ 4.

Ուժը կորցրած ճանաչել օրենքի 23-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 5.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Նախագիծ
Պ-1042՝-02.12.2010-ԱՄ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ- 59-Ն օրենքի /այսուհետև՝ օրենք/ 32-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 32. ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՄ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ:

Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

Հատուկ դաստիարակչական կամ բուժականխարգելիչ կամ հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության եւ մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների եւ այլ անձանց հետ տեսակցության եւ նամակագրության իրավունք:

Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելը եւ վերադաստիարակելը»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի եւ «Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի նախապատրաստումը պայմանավորված է հոգեկան առողջության բնագավառի իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությամբ եւ հոգեկան խանգարումներով տառապող անձանց, մասնավորապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրական հստակեցումների անհրաժեշտությամբ:

Այսպես, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի համաձայն անձի հարկադիր հոսպիտալացում պետք է իրականացվի միայն օրենքով նախատեսված դեպքերում: ՀՀ օրենսդրությամբ հարկադիր բուժում նախատեսվում է հանցագործություն կատարած անձանց համար, ընդ որում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով սահմանվում է, թե հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ կոնկրետ որ դեպքում եւ հոգեբուժական ինչպիսի հաստատությունում են կիրառվում բժշկական բնույթի հարկադրական միջոցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ գլխով, սահմանվում են քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը: Սակայն ՀՀ որեւէ օրենքով նախատեսված չեն քաղաքացուն հոգեբուժական հաստատությունում տեղավորելու հիմքերը:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի հոգեբուժական ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հոժարական (կամավոր) կարգով գտնվող հիվանդի դուրսգրումը կատարվում է հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ հիվանդի պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ հիվանդը տվյալ պահին հասարակական վտանգ է ներկայացնում: Այս դեպքում հոգեբուժական այն կազմակերպության տնօրինությունը, որում բուժվում է քաղաքացին, սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում դիմում է դատարան՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական (հարկադիր) բուժման ենթարկելու համար: Այսպիսով, ՀՀ օրենքներով անձը կարող է հարկադիր բուժման ենթարկվել հանցագործություն կատարելու կամ հասարակական համար վտանգ ներկայացնելու դեպքում:

Համաշխարհային առողջապահական կազմակերպության 2006 թվականի «Հոգեկան առողջության եւ մարդու իրավունքների ոլորտում օրենսդրության վերաբերյալ ներկայացվող ցուցումների» 3.1.4 հոժարական կամ հարկադիր հոսպիտալացում բաժնի համաձայն, հոգեկան խանգարում ունեցող

անձը կարող է հարկադիր հոսպիտալացվել, եթե վտանգ է ներկայացնում իր եւ այլ անձանց համար, կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

Նախագծով նախատեսվում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, որով հոգեկան խանգարումներ ունեցող անձի բուժումը դադարեցնելու պահանջը կարող է մերժվել օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում: Նույն հոդվածից հանվել են հոգեբուժական կազմակերպության տնօրինության դատարան դիմելու լիազորությունների վերաբերյալ դրույթները, քանի որ բովանդակային առումով դրանք պետք է ընդգրկվեն այլ հոդվածում:

Նախագծով օրենքի 22-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով սահմանվել են հոգեկան խանգարումներ ունեցող անձին առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության հոսպիտալացնելու դեպքերը: Դրանք են՝

" Եթե հոգեկան խանգարումներ ունեցող անձը վտանգ է ներկայացնում իր համար:

" Եթե հոգեկան խանգարումներ ունեցող անձը վտանգ է ներկայացնում այլ անձանց համար:

" Եթե հոգեկան խանգարումներ ունեցող անձի բուժումը չիրականացնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակ:

" Եթե հոգեկան խանգարումներ ունեցող անձի բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

Բացի այդ, օրենքի 21-րդ եւ 23-րդ հոդվածների այն դրույթները, որոնք վերաբերում են անձին ոչ հոժարակամ հոսպիտալացման կարգին, մասնավորաբար, դատարան դիմելու կարգին եւ ժամկետներին, ընդգրկվել են 22-րդ հոդվածում, քանի որ հոդվածի վերնագիրը փոխվել է հետևյալ վերտառությամբ՝ «ՈՉ ՀՈՐԺԱՐԱԿԱՄ /ՀԱՐԿԱԴԻՐ/ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»:

Մյուս խնդիրը, որին անրադառնում է սույն նախագիծը՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների հստակեցումն է: Մասնավորապես անրադարձ է կատարվում այն խնդրին, որ համաձայն գործող օրենքի «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերնագրված է «Հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքները» եւ Հոդվածի 2-րդ մասում թվարկված են հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքները, սակայն թվարկումը վերաբերում է միայն հիվանդանոցային պայմաններում բուժվող հոգեկան խանգարում ունեցողներին: Այս առումով անհրաժեշտ է հոդվածում կատարել լրացում, նշելով, թե ովքեր են օգտվում թվարկված իրավունքներից:

Բացի այդ, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց որոշակի իրավունքներ ամրագրված են 22-րդ հոդվածում, որի պատճառով կորում է հոգեկան խանգարումներով տառապող անձի իրավունքների վերաբերյալ ամփոփ եւ ամբողջական պատկերացումը, որը կարող է բերել օրենքի ոչ ճիշտ մեկնաբանության եւ որպես հետեւանք՝ մարդու իրավունքների ոտնահարման:

Գործող օրենքի 22-րդ հոդվածը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության պահանջներին, համաձայն որի հոդվածի վերնագիրը պետք է համապատասխանի հոդվածի բովանդակությանը:

Հոդվածը պետք է վերաբերի ոչ հոժարակամ հոսպիտալացմանը, իսկ իրավունքները պետք է ընդգրկվեն նույն օրենքի 6-րդ հոդվածում, քանի որ հարկադիր հոսպիտալացվող անձինք եւս հոգեկան խանգարումներ ունեցողներ են:

Հոդվածում դրույթներ են նախատեսվել նաեւ հոգեկան խանգարում ունեցող երեխայի իրավունքների մասին, ինչպես նաեւ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթները

տեղափոխվել են 6-րդ հոդված, որպես 12-րդ մաս, քանի որ այն վերաբերում է հոգեկան խանգարում ունեցող անձի իրավունքների սահմանափակման դեպքերին և կարգին:

Նախագծով ուժը կորցրած է ճանաչվում օրենքի 23-րդ՝ «ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ» հոդվածը, քանի, որ նրա դրույթները տեղափոխվել են օրենքի 6-րդ հոդվածի 12-րդ մաս և 22-րդ հոդվածի 2-րդ մաս:

Միաժամանակ ներկայացում է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով, օրենքի 32-րդ հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ: Նախագծով հոդվածում ամրագրվում են դրույթներ, համաձայն որոնց հոգեկան խանգարումներ ունեցող երեխաները հոգեբուժական հաստատություններ առանց իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնության կարող են հոսպիտալացվել դատարանի վճռով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Դեպքերը և կարգը արդեն իսկ նախատեսվում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն նախատեսող նախագծով: Փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս հոգեկան խանգարումներ ունեցող երեխաների հոսպիտալացման վերաբերյալ նորմեր ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն: Հոգեկան խանգարումներ ունեցող երեխաներին բուժելու և նրանց անվտագությունն ապահովելու նպատակով, վերջիններիս ազատությունից զրկելու վերաբերյալ նորմերի, ինչպես նաև անազատության մեջ պահելիս նրանց իրավունքների ամրագրումն օրենքով անհրաժեշտ է և բխում է ՀՀ Սահմանադրությունից: